ԳԼՈՒԽ ԺԳ.

ՄԱՅԻՍԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Վրաստանում, Ադրբէջանում, Հիւսիսային Կովկասում և ամենուրեք հայ բոլշևիկները ենթարկւում էին անողոք հալածանքի, Հայաստանի կառավարութիւնը նրանց տուեց հնարաւորութիւն ապրելու և աշխատելու Հայաստանում: Հայ բոլշևիկ գործիչներից շատերը՝ Ս. Կասեան, Ա. Մռաւեան, Ս. Խանոյեան, Դ. Շահվերդեան, Մ. Սահակեան, Ե. Երզնկեան, Աւիս Նուրիջանեան և ուրիշներ իրենց կեանքը փրկեցին Հայաստանի կառավարութեան շնորհիւ: Նրանք Հայաստանում վարում էին զանազան պաշտօններ պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ — դպրոցներում, կօօպերատիւներում, նախարարութիւնների, պետական վերահսկողութեան, ինքնավարութիւնների մէջ:

Ընդունելով Հայաստանի սահմանների մէջ՝ կառավարութիւնը մի պայման էր դրել հայ կոմունիստներին — հակապետական աշխատանք չկատարել: Եւ նրանք ամենքը ազնիւ խօսք էին տուել յարգելու այդ պայմանը: Նրանցից ոմանք իրենք հէնց անմտութիւն էին համարում բոլշևիկեան գործօն աշխատանքը Հայաստանում: Եւ քանի պատերազմական գործերը Խորհրդային Ռուսաստանում յաջող չէին, ընդհանուր առմամբ, պահւում էր տուած խօսքը: Ճիշտ է, պատահում էին մասնակի խախտումներ, ինչպէս «Սպարտակեանների» թռուցիկը Բէոյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, բայց կառավարութիւնը ներողամիտ աչքով էր նայում:

Սակայն, երբ կարմիր զօրքերը սկսեցին մօտենալ Կովկասին, Հայաստանում հիւրընկալուած բոլշևիկներն էլ չդիմացան և անցան հակապետական գաղտնի գործունէութեան: Նրանք պրոպագանդ էին մղում զօրքի և բանւորութեան մէջ. բաց էին թողնում գաղտնի թռուցիկներ ու թերթեր: Իրենց կողմը քաշելով Խորհրդարանի անկուսակցական պատգամաւոր Արտաշէս Մելքոնեանին, նրա միջոցով, հրատարակում էին «Գիւղացիական Ձայն» թերթը, որ անհաշտ պայքար էր մղում տիրող ռեժիմի դէմ և, առանց ծածկելու, անում էր խորհրդային իշխանութեան գովքը:

Ա. Մռաւեանը պատմում է, որ 1919—20 թուականներին բոլշևիկեան եռանդուն գործունէութիւն կար Հայաստանում: Գաղտնի բջիջներ էին կազմւում, գրականութիւն էր տարածւում, ժողովներ էին գումարւում, քարոզչութիւն էր արւում զօրքի և բանւորութեան մէջ: